

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 328

DOI: 10.56246/18294480-2023.15-44

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱԶԳԵՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ
Էլփոստ՝ vazgen.abrahamyan@paara.am

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովների գործունեության հիմնախնդիրներին, քննիչ հանձնաժողովի սպեղծման, գործունեության կազմակերպման և իրավական կարգավիճակի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությանը: Համեմատական վերլուծություն է կատարվել այլ պառլամենտներում գործող քննիչ հանձնաժողովների լիազորությունների, գործառույթների հետ, և առաջարկվել են նոր լուծումներ ՀՀ-ում քննիչ հանձնաժողովների գործունեության կառուցակարգերի վերաբերյալ:

Քննիչ հանձնաժողովի սպեղծումը պարզամավորների ընդհանուր թվի մեկ քառորդի պահանջով փեսական և գործնական մակարդակներում խնդրահարույց է և կարող է սահմանափակել խորհրդարանական փոքրամասնության կողմից իրեն վերապահված վերահսկողական այս գործիքի կիրառումը, ուստի առաջարկվել է վերանայել գործող կարգավորումները:

Ուսումնասիրության արդյունքում արվել է այն եզրակացությունը, որ Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովների կազմավորման հիմքում ժողովրդական լեգիտիմացիայի սկզբունքի կիրառումը սխալ է, քանի որ խորհրդարանական կառավարման պայմաններում հանձնաժողովը հիմնականում վերահսկողություն է իրականացնում մեծամասնության կողմից ձևավորված կառավարության նկատմամբ, հետևաբար խորհրդարանական ուժերի համամասնությամբ ձևավորման դեպքում վերահսկողությունը կրում է ձևական բնույթ, և փոքրամասնությունը ինչպես խորհրդարանում, այնպես էլ հանձնաժողովում ի վիճակի չէ նպատակային վերահսկողություն իրականացնել: Կարծում ենք՝ քննիչ հանձնաժողովը պետք է խորհրդարանական մեծամասնությունից կախված չլինի, ուստի առաջարկվել է վերանայել հանձնաժողովը համամասնությամբ կազմավորելու սկզբունքը:

Քանալի բառեր՝ Սահմանադրություն, Ազգային ժողով, քննիչ հանձնաժողով, պարզամավոր, խմբակցություն, համամասնություն, մեծամասնություն:

Ներածություն: Խորհրդարանը՝ որպես օրենսդիր մարմին, կարևոր դեր ունի իրավական պետության կայացման գործում՝ ապահովելու կապը և համագործակցությունն իշխանության միակ կրողի՝ ժողովրդի և նրա ներկայացուցիչների միջև: Խորհրդարանը ժողովրդի կամքն արտահայտող մարմին է, որն իրականացնում է նաև վերահսկողական գործառույթ:

Խորհրդարանի վերահսկողական գործառույթի համատեքստում «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի ներդաշնակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մարմիններ և օժտել անհրաժեշտ լիազորություններով՝ գործառույթի իրացման անխափանությունն ապահովելու համար: Ուստի խորհրդարանի վերահսկողական գործառույթի ապահովումն իրականացնելիս պահանջվում են համապատասխան

կառուցակարգեր: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հետևանքով ՀՀ-ում ավելացան և բարեփոխվեցին խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերը: Նոր կառուցակարգերի ներդրմամբ ընդլայնվեցին պառլամենտական փոքրամասնություն կազմող պատգամավորների իրավունքները, որոնք իրենց գործունեությունն են ծավալում նաև որպես Ազգային ժողովի հանձնաժողովների անդամներ:

Ինչպես նշում է Հ. Հակոբյանը, Ազգային ժողովի հանձնաժողովները ժողովրդավարության զարգացմանը նպաստող, պառլամենտարիզմի մշակույթ ձևավորող ինստիտուտներ են: Համաձայն ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով: Պատգամավորների մեկ քառորդ շեմը սահմանելով՝ սահմանադրորեն փոքրամասնությունը հնարավորություն է ունենում ստեղծելու քննիչ հանձնաժողովներ:

Սակայն քննիչ հանձնաժողովների ձևավորման և գործունեության ընթացքում ի հայտ եկան մի շարք հիմնախնդիրներ: Այսպես, իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական մեծամասնությունը կարող է խոչընդոտել փոքրամասնության նախաձեռնությամբ և իրավունքի ուժով ստեղծված քննիչ հանձնաժողովի աշխատանքը՝ խմբակցության կողմից չներկայացնելով այդ հանձնաժողովի անդամներ, կամ մեծամասնության կողմից հանձնաժողովի անդամները կարող են պարզապես չներկայանալ նիստերին², որի պատճառով հանձնաժողովի նիստերը չեն կարող լինել իրավազոր: Մյուս կողմից՝ քննիչ հանձնաժողովում իշխող ուժը, ունենալով մեծամասնություն, կարող է հանձնաժողովի ցանկացած որոշում տապալել: Բացի դրանից՝ Ազգային ժողովը մեծամասնության առկայության պայմաններում կարող է չհաստատել քննիչ հանձնաժողովի անդամների թիվը: Այս և մյուս հանգամանքները ակնհայտ խոչընդոտում են քննիչ հանձնաժողովների գործունեությանը: Ասվածի վկայությունն է մինչ օրս կազմավորված քննիչ հանձնաժողովների փորձի ուսումնասիրությունը:

Դեռևս ոչ մի իրավական գործընթացի կամ այլ նպատակային արդյունքի չի հանգեցրել Ազգային ժողովում ստեղծված այդ հանձնաժողովների գործունեությունը, նույնիսկ որոշ քննիչ հանձնաժողովներին խորհրդարանական մեծամասնությունը հրաժարվում է մասնակցել [1]: Ընդդիմադիր խմբակցությունների կողմից ստեղծված «Դատարաններում գործերի՝ օրենքով սահմանված բաշխման կարգի խախտմամբ, ինչպես նաև Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցմամբ արդար դատաքննությունը խոչընդոտող փաստերն ուսումնասիրող» քննիչ հանձնաժողովի անդամների թիվն էլ չհաստատվեց Ազգային ժողովի որոշմամբ, որի հետևանքով հանձնաժողովը իրավունքի ուժով ստեղծված է, բայց չունի հաստատված անդամներ [2]: Այսինքն՝ գործող իրավակարգավորումներով Ազգային ժողովում ներկայացված ուժերը զրկված են քննիչ հանձնաժողով ստեղծելու իրենց իրավունքը իրացնելուց: Գործող կարգի համաձայն՝ սահմանադրական «իրավունքի ուժով» նորմը ստորադասվում է Ազգային ժողովի որոշմանը:

1. Այս մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2007, էջ 365-388:

2. Նիստերին չներկայանալու խնդրի հաղթահարման վերաբերյալ օրենսդրական փոփոխության առաջարկություն է ներկայացրել Տ. Նաղդայանն իր՝ ի. գ. թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության մեջ՝ «Գործադիր իշխանության նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողության սահմանադրական հիմքերը» թեմայով, Երևան, 2017, էջ 97:

Ուսումնասիրելով մի շարք երկրների պառլամենտներում քննիչ հանձնաժողովի ստեղծման, գործունեության կազմակերպման և իրավական կարգավիճակի վերաբերյալ հարցերը՝ կարելի է ամբողջապես համաձայնել Գերմանիայում խորհրդարանական հետաքննության ներդրման գաղափարախոսներից մեկի՝ Մաքս Վեբերի հետ, որը գտնում էր, որ կապված այն հանգամանքի հետ, թե խորհրդարանական ժողովրդավարություններում մեծամասնության կողմից սատարվող կառավարությանը դժվար է վերահսկել փոքրամասնության կողմից, ուստի փոքրամասնությանը այդ անհավասար պայքարում անհրաժեշտ է զինել համապատասխան գործիքակազմով՝ խորհրդարանական հետաքննությամբ [3]: Այսպիսով, քննիչ հանձնաժողովների ստեղծումը պառլամենտական փոքրամասնության իրավունքն է:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիրառվում են տարբեր եզրույթներ հիշյալ մարմնի անվանման կապակցությամբ: Մի շարք երկրներում օգտագործվում է «կոմիտե» եզրույթը (Գերմանիա[4], Իտալիա[5]), իսկ Սլովենիայում[6]՝ «հանձնաժողով»: Սակայն եզրույթաբանական տարբերությունը իրավաբանական առումով կարևոր նշանակություն չունի: Այն պայմանավորված է բացառապես համապատասխան երկրների սահմանադրություններում և օրենքներում այդ մարմիններին տրված անվանումով և իրավասությամբ:

Քննիչ հանձնաժողովներին առնչվող հարցերը տարբեր պետություններ կարգավորել են հիմնականում երկու ձևով: Առաջին դեպքում այս ինստիտուտին վերաբերող առանցքային հարցերը հստակորեն կարգավորվել են սահմանադրական մակարդակում, որոնք իրենց հետագա մանրամասն կանոնակարգումն են ստացել խորհրդարանական հետաքննության մասին առանձին օրենսդրական ակտերում կամ խորհրդարանի կանոնակարգերում (Գերմանիա, Իսպանիա, Իտալիա, Մակեդոնիա, Պորտուգալիա, Չեխիա, Խորվաթիա, Լյուքսեմբուրգ, Ալբանիա, Ուկրաինա, Լեհաստան և այլն): Երկրորդ դեպքում Սահմանադրությունում քննիչ հանձնաժողովին վերաբերող կարգավորումները բացակայում են, սակայն դրանում առկա որոշ դրույթների հիման վրա ընթացիկ օրենսդրական ակտերով սահմանվում է քննիչ հանձնաժողովի ինստիտուտը (ԱՄՆ, Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս և այլն)[7]: Կարծում ենք՝ վերահսկողության կառուցակարգերի սահմանադրական ամրագրումը հնարավորություն է տալիս ապահովել կայունություն, քանզի Սահմանադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելն առավել բարդ գործընթաց է, ուստի գործող իշխանությունը չի կարող դյուրությամբ ավելացնել կամ նվազեցնել խորհրդարանական վերահսկողության ծավալը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ քննարկվող կառուցակարգը փոքրամասնության իրավունքն է:

Խորհրդարանի հետաքննության մարմինները տարբեր ձևերով ստեղծվել են ամբողջ աշխարհում, սակայն ենթադրվում է, որ առաջին պաշտոնական խորհրդարանական հետաքննությունը տեղի է ունեցել Միացյալ Թագավորությունում 18-րդ դարում (1720 թվականին «Հարավային ծովեր» կազմակերպության սննկացման վերաբերյալ) [7, էջ 98]:

Ռուսաստանում խորհրդարանական հետաքննությունների ինստիտուտն իր պատմությունն ունի. առաջին «պաշտոնյաների հանցագործությունները հետաքննող հանձնաժողովը» ստեղծվել է Պետդումայի կողմից 1906 թվականի մայիսի 23-ին, երբ հանձնաժողովի երեսուներեք պատգամավորներին հանձնարարվել էր հետաքննել 1905 թվականի հոկտեմբերի 17-ին Մանիֆեստի հրապարակումից հետո պաշտոնյաների կողմից կատարված հանցագործությունները[8]:

ԱՄՆ-ում առաջին հետաքննության կոմիտեն ստեղծվել է 1789 թվականի հուլիսի 24-ին, որը կոչվում էր «Ճանապարհների և միջոցների կոմիտե» (The Committee on Ways and Means): Կոմիտեն ստեղծվել է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից և հանձնարարվել է հետաքննել դաշնային կառավարության ֆինանսական գործերը[9]:

Հայաստանի երեք Հանրապետությունների օրենսդրական համակարգերում առկա են եղել քննիչ հանձնաժողովի վերաբերյալ դրույթներ: Հայաստանի առաջին Հանրապետության հարցապնդումների հանձնաժողովը երբեմն անվանում էին քննիչ հանձնաժողով, քանի որ այն իրավասու էր պարզելու իր առջև դրված հարցի վերաբերյալ փաստերը, կազմելու եզրակացություններ և ներկայացնելու խորհրդարանին [10]: ՀԽՍՀ-ում ևս Գերագույն խորհուրդը իրավասու էր ցանկացած հարցով ստեղծելու քննիչ հանձնաժողով [11]: 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրության ընդունմամբ նախատեսվեց դրույթ ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման վերաբերյալ, որոնք մասամբ ներառում էին քննիչ հանձնաժողովի լիազորություններ: Այնուամենայնիվ, ՀՀ-ն չժառանգեց ՀԽՍՀ Սահմանադրությամբ ամրագրված քննիչ հանձնաժողովի վերաբերյալ կարգավորումները: 1995թ. Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում ստեղծվում են վեց մշտական հանձնաժողով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ: /.../ ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար [12]: Սակայն գործնական առումով քննիչ հանձնաժողովի լիազորությունների նմանության մասով այդ դրույթը արդյունավետ կիրառություն չունեցավ³: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո այս դրույթը պահպանվեց: Միայն 2015 թվականից հետո նոր կառուցակարգերի ներդրմամբ կրկին նախատեսվեց քննիչ հանձնաժողովի ստեղծման հնարավորությունը, ինչպես նաև հստակեցվեց ժամանակավոր հանձնաժողովի գործունեության տիրույթը (հոդված 107) և դրան վերապահվեց առանձին օրենքների, որոշումների, հայտարարությունների, ուղերձների նախագծերի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու իրավասություն, և առաջին անգամ այս հանձնաժողովին տրվեց իրավունք՝ քննարկելու պատգամավորական էթիկային առնչվող հարցեր:

Վերլուծելով քննիչ հանձնաժողովի ստեղծման և ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքով սահմանված գործունեության կարգը, ինչպես նաև ուսումնասիրելով իրավակիրառ պրակտիկան՝ ակնհայտ են դառնում չկարգավորված այն կառուցակարգերը, որոնք խանգարում են հանձնաժողովի բնականոն գործունեությանը: Առաջին հերթին քննարկման առարկա դարձնենք քննիչ հանձնաժողովի կազմավորման համար անհրաժեշտ պատգամավորների նվազագույն քանակը: Միջազգային իրավական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներ որդեգրել են տարբեր մոտեցումներ՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Առանձնացնում ենք քննիչ հանձնաժողովների գործունեության նկատմամբ երկու հիմնական մոտեցում. առաջին, երբ խորհրդարանական հետաքննությունն իրականացվում է մշտական հանձնաժողովների կողմից, երկրորդ, ստեղծվում են հատուկ հետաքննություն իրականացնելու իրավասությամբ օժտված ժամանակավոր մարմիններ (քննիչ հանձնաժողովներ, կոմիտեներ) [13]: Մշտական հանձնաժողովներին նման լիազորություն վերապահված է Կոտդիվուարում, Կամերունում, Լատվիայում: Մեր հետազոտության տեսանկյունից քննարկման առարկա կդարձնենք երկրորդ խմբի մարմինները: Այսպես, քննիչ հանձնաժողովները սովորաբար ստեղծվում են խորհրդարանի անդամների միջնորդությունների հիման վրա: Գերմանիայի Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ Բունդեսթագը պարտավոր է իր անդամների մեկ քառորդի միջնորդությամբ ստեղծել քննիչ

³ Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հինգերորդ գումարման (2012-2017թթ.) ՀՀ Ազգային ժողովում ստեղծվել է ընդամենը մեկ ժամանակավոր հանձնաժողով, մինչդեռ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների կողմից ներկայացվել է ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու տասնմեկ նախաձեռնություն: Չորրորդ գումարման (2007-2012թթ.) խորհրդարանում ստեղծվել է մեկ, երրորդ գումարման (2003-2007թթ.) խորհրդարանում՝ երեք, երկրորդ գումարման (1999-2003թթ.) խորհրդարանում՝ չորս, առաջին գումարման (1995-1999թթ.) խորհրդարանում՝ երկու ժամանակավոր հանձնաժողովներ [7, էջ 100]:

հանձնաժողով, որը պետք է հավաքի անհրաժեշտ վկայություններ հանրային լուսմների միջոցով [4]: Հունաստանում քննիչ հանձնաժողովները ստեղծվում են պատգամավորների 1/10-րդի պահանջով, Սլովենիայում՝ 1/3-րդի, Հունգարիայում՝ 1/5-րդի պահանջով[14]: Այլ երկրներում ստեղծվում է խորհրդարանի կամ պալատի կողմից (երկպալատի դեպքում) բանաձևի կամ որոշման ընդունմամբ: Այսպես, օրինակ Ավստրիայի Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային խորհրդի քննիչ հանձնաժողով կարող է ստեղծվել բանաձևի ընդունմամբ [15]: Իսկ Ազգային խորհրդի կանոնակարգի 33-րդ պարագրաֆի համաձայն՝ բանաձևի առաջարկը ներկայացվում է 5 պատգամավորի կողմից[16], և Ազգային խորհուրդը որոշում է կայացնում բանաձևի ընդունման վերաբերյալ, իսկ եթե 46-ն են պահանջում, ապա այս դեպքում պարտավոր է ձևավորել քննիչ հանձնաժողով: Նմանատիպ կարգավորում է գործում նաև Մակեդոնիայում [17]՝ պարզապես 20 պատգամավորի նախաձեռնությամբ: Իսկ Ռումինիայի Սահմանադրության 64-րդ հոդվածի[18] և պատգամավորների պալատի կանոնադրության 74 և 75-րդ հոդվածների համաձայն՝ նման իրավունք ունեն նաև մշտական կոմիտեները և պատգամավորական խմբերը [19]: ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է իրավունքի ուժով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով: Նման իրավակարգավորումը բավականին վիճահարույց է և սահմանափակում է խորհրդարանական փոքրամասնության իրավունքները վերահսկողության ոլորտում: Բավական է վերլուծել միայն գործող խորհրդարանում ընդգրկված ուժերի հարաբերակցությունը: Այժմ խորհրդարանը բաղկացած է 107 պատգամավորից, որից 71-ն ընդգրկված է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում, 29-ը՝ «Հայաստան», 6-ը՝ «Պատիվ ունեն», և մեկ հոգի դուրս է եկել խմբակցությունից [20]: Իսկ քննիչ հանձնաժողով կազմելու համար անհրաժեշտ է առնվազն 27 պատգամավորի առկայություն: Ուստի նման պայմաններում «Պատիվ ունեն» խմբակցության պատգամավորները զրկված են իրենց այդ լիազորությունն իրականացնելու հնարավորությունից: Իսկ յոթերորդ գումարման Ազգային ժողովում ընդգրկված էր 132 պատգամավոր և քննիչ հանձնաժողովի ստեղծման համար անհրաժեշտ էր առնվազն 34 պատգամավոր, սակայն ո՛չ «Բարգավաճ Հայաստան» և ո՛չ էլ «Լուսավոր Հայաստան» խմբակցություններում ընդգրկված չէին համապատասխան թվով պատգամավորներ: Այդ պատճառով քննիչ հանձնաժողովներ կարող են ստեղծվել միայն այդ խմբակցությունների համատեղ ջանքերով, ինչը ոչ միշտ է հնարավոր: Այսպիսի կարգավորումների հետևանքով փոքրամասնությունը զրկված է իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից: Հաշվի առնելով արտասահմանյան երկրներում գործող իրավակարգավորումները՝ առաջարկում ենք վերը նշված խնդիրը լուծելու նպատակով ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **Ազգային ժողովի խմբակցության պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:** Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունները ձևավորում են խմբակցություններ, որոնք պառլամենտ են եկել որոշակի ծրագրով և հանդիսանում են պառլամենտական մարմին, ուստի նրանց վերապահելով քննիչ հանձնաժողովի ստեղծման իրավասություն՝ վերջիններս կկարողանան արդյունավետ իրացնել իրենց վերահսկողական լիազորությունները:

Գործող իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական մեծամասնությունը կարող է խոչընդոտել փոքրամասնության նախաձեռնությամբ և իրավունքի ուժով ստեղծված քննիչ հանձնաժողովի աշխատանքը՝ խմբակցության կողմից ներկայացնելով անդամներ կամ մեծամասնության հանձնաժողովի անդամները կարող են պարզապես

չներկայանալ նիստերին⁴, որի պատճառով հանձնաժողովի նիստերը չեն լինի իրավազոր: Մյուս կողմից՝ քննիչ հանձնաժողովում իշխող ուժը, ունենալով մեծամասնություն, կարող է հանձնաժողովի ցանկացած որոշում ի օգուտ կառավարության ընդունել: Այսպես, գործող Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, բացի դրանից՝ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը: Քննիչ հանձնաժողովում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը: Նման դրույթ առկա է նաև այլ պետությունների սահմանադրություններում: Ռումինիայի Սահմանադրության 64-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Մշտական բյուրոները և խորհրդարանական հանձնաժողովները կազմված են այնպես, որ արտացոլեն յուրաքանչյուր պալատի քաղաքական սպեկտրը [18]: Իտալիայի Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ Ներկայացուցիչների պալատը կարող է անցկացնել հետաքննություն հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ: Այդ նպատակով այն իր անդամներից ձևավորում է կոմիտե այնպես, որ ներկայացնի խորհրդարանում ընդգրկված պատգամավորական խմբերի համամասնությունը [5]: Սրա հիմքում դրված է այն գաղափարը, որ խորհրդարանի մաս կազմող մարմինները միայն այն դեպքում են ժողովրդական իրավազորությամբ կազմված, երբ բաղկացած են օրինական ճանապարհով ընտրված ժողովրդի ներկայացուցիչներից: Կարծում ենք՝ քննիչ հանձնաժողովների կազմավորման հիմքում ժողովրդական իրավազորության սկզբունքի կիրառումը սխալ է, քանի որ խորհրդարանական կառավարման պայմաններում հանձնաժողովը հիմնականում վերահսկողություն է իրականացնում մեծամասնության կողմից ձևավորված կառավարության նկատմամբ, հետևաբար խորհրդարանական ուժերի համամասնությամբ ձևավորման դեպքում վերահսկողությունը կրում է ձևական բնույթ և փոքրամասնությունը, ինչպես խորհրդարանում, այնպես էլ հանձնաժողովում ի վիճակի չէ նպատակային վերահսկողություն իրականացնելու: Ընդհակառակը, կարծում ենք՝ քննիչ հանձնաժողովը պետք է խորհրդարանական մեծամասնությունից կառուցակարգային անկախություն ունենա, իսկ համամասնությամբ կազմավորվելու դեպքում, երբ գործում է կայուն մեծամասնության սկզբունքը, առնվազն անարդյունավետ է դառնում այս ինստիտուտի կիրառումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ստեղծված են Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ և մասնագիտական հանձնաժողով, և 2022 թվականի նոյեմբերի 30-ի համատեղ հերթական նիստում անդամները կողմ քվեարկեցին խորհրդարանական կառավարման ձևի պահպանմանն ու խորհրդարանական կառավարման մոդելի բարելավմանը [21], կարծում ենք, որ մանրամասն քննարկման առարկա պետք է դառնա նաև խորհրդարանի վերահսկողական գործառույթը: Եվ այդ նպատակով առաջարկում ենք Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն. քննիչ հանձնաժողովի կազմավորման հարցում հրաժարվել ժողովրդական լեգիտիմացիայի սկզբունքից և տեղերը բաշխել հավասար՝ խորհրդարանում ընդգրկված խմբակցությունների մեջ, և խմբացություններն էլ պարտավոր են մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնելու իրենց թեկնածուների անունները: Այն առավել անաչառ և արդյունավետ կդարձնի քննիչ հանձնաժողովների գործունեությունը, ինչպես նաև Ազգային ժողովին կպարտավորեցնի անհապաղ ընդունել որոշում քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին:

Եզրակացություն: Խնդրո առարկայի վերաբերյալ բարձրացված հարցերը պարզաբանելու, հիմնախնդիրները քննարկելու և հնարավոր առաջարկներ ներկայացնելու

⁴ Նիստերին չներկայանալու խնդրի հաղթահարման վերաբերյալ օրենսդրական փոփոխության առաջարկություն է ներկայացրել Տ.Նաղդալյանն իր վերը նշված ատենախոսության մեջ:

նպատակով, ուսումնասիրելով միջազգային փորձը և վերլուծելով գործող իրավակարգավորումները, հանգել ենք որոշ եզրահանգումների և օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների: Քննիչ հանձնաժողովների ստեղծման և գործունեության կազմակերպման վերաբերյալ ընդունված են բազմաթիվ մոտեցումներ, որոնք տարբերվում են՝ պայմանավորված տվյալ երկրի կառավարման ձևով: Հայաստանի Հանրապետությունում քննիչ հանձնաժողովի սահմանադրական ամրագրումը հնարավորություն չի տալիս

գործող իշխանությանը հեշտությամբ ավելացնել կամ նվազեցնել այդ բնագավառում խորհրդարանական վերահսկողության ծավալը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ քննարկվող կառուցակարգը փոքրամասնության իրավունք է:

Քննիչ հանձնաժողովի ստեղծումը պատգամավորների ընդհանուր թվի մեկ քառորդի պահանջով տեսական և գործնական մակարդակներում խնդրահարույց է և կարող է սահմանափակել խորհրդարանական փոքրամասնության կողմից իրեն վերապահված այս վերահսկողական գործիքի կիրառումը, ուստի միջազգային իրավական մի շարք կարգավորումների ուսումնասիրության հիման վրա առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային ժողովի խմբակցության պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով»: Դիտարկենք նաև այն հանգամանքը, որ խորհրդարանում որպես քաղաքական միավորումներ և խորհրդարանական մարմիններ են հանդես գալիս խմբակցությունները, որոնք ունեն կարևոր դերակատարություն:

Անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն. քննիչ հանձնաժողով ձևավորելիս տեղերը բաշխել հավասար՝ խորհրդարանում ընդգրկված խմբակցությունների մեջ, և խմբակցություններն էլ պարտավոր են մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել քննիչ հանձնաժողովում իրենց թեկնածուների անունները: Այսպիսի կարգավորման դեպքում քննիչ հանձնաժողովների գործունեությունը կդառնա առավել անաչառ և արդյունավետ: Բացի դրանից՝ անհրաժեշտ է սահմանադրորեն Ազգային ժողովին պարտավորեցնել՝ անհապաղ ընդունել որոշում քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ստեղծվել է պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողով. «Պատիվ ունեմ»-ը չի մասնակցի
<https://www.azatutyun.am/a/31697658.html>;
2. Դատարաններում գործերի բաշխման ուսումնասիրման ԱԺ քննիչ հանձնաժողովի մասին.
<https://hetq.am/hy/article/138154>,[http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111231&lang=arm](http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111231&lang=arm;);
3. Коврякова Е. Б., Особенности парламентского контроля в парламентарной республике (на примере ФРГ) "Журнал российского права", N 6, 2004 г. с 143
4. ԳԴՀ Սահմանադրություն, հոդված 44 https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html#p0210;
5. Իտալիայի Սահմանադրություն հոդված 82
https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione_inglese.pdf;

6. Սլովենիայի Սահմանադրություն, հոդված 93. <https://www.us-rs.si/media/constitution.pdf>
7. Նաղդալյան Տ. Գործադիր իշխանության նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողության սահմանադրական հիմքերը. ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 97:
8. Государственная Дума 1906–1917. Стенографический отчёт. М., 1995. Т. 2. С. 741.
9. The Committee on Ways and Means <https://waysandmeans.house.gov/history/>
10. Վաղարշյան Ա. Գ., Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 204:
11. ՀԽՍՀ 1978 Սահմանադրություն <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150837>
հոդված 109
12. ՀՀ Սահմանադրություն(05.07.1995թ.) <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1>
13. Tools for parliamentary oversight/edited by Hironori Yamamota/, interparliamentary inion, 2007 p. 40
14. Տե՛ս հետևյալ հղումով <http://archive.ipu.org/parline-e/mod-oversight.asp>.
15. Ավստրիայի Սահմանադրություն
https://constitutionnet.org/sites/default/files/Austria%20_FULL_%20Constitution.pdf
16. Ավստրիայի Ազգային խորհրդի կանոնակարգ.
<http://www.parliament.am/library/kanonakarger2019/avstria.pdf>
17. Մակեդոնիայի Սահմանադրություն
<https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/36714/70972/F511737559/MKD36714%20Eng.pdf>.
18. Ռումինիայի Սահմանադրություն
<https://www.presidency.ro/en/the-constitution-of-romania>
19. Ռումինիայի Պատգամավորների պալատի կանոնադրություն
<https://www.cdep.ro/pls/dic/site.page?id=951&par1=0&idl=2>
20. Ազգային ժողովի խմբակցությունների վերաբերյալ
<http://www.parliament.am/deputies.php?sel=factions&lang=arm>
21. Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը ձայների մեծամասնությամբ կողմ քվեարկեց խորհրդարանական կառավարման մոդելի պահպանման ու բարելավման հարցին <https://moj.am/article/3377>:
22. Հակոբյան Հ. Հ. Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2007, էջ 365-388:

ON THE PROBLEMS OF CREATING AND ORGANIZING THE ACTIVITIES OF THE INQUIRY COMMITTEES OF THE NATIONAL ASSEMBLY

ABRAHAMYAN VAZGEN

Phd student at the Public Administration Academy of the RA

e-mail: vazgen.abrahamyan@paara.am

The Issues related to the formation of the inquiry committees in the National Assembly of the Republic of Armenia. The work is aimed at studying the experience of local and foreign countries regarding the creation of the inquiry committees and their legal status.

The creation of an inquiry commission with the requirement of a quarter of the total number of deputies is theoretically and practically problematic and may limit the use of this control tool by the parliamentary minority. Therefore, it was suggested to revise these regulations.

The application of the principle of popular legitimation in the basis of the formation of inquiry committees is considered inappropriate, because in parliamentary system of government, the committee mainly exercises control over the government formed by the majority. In the case of proportional formation of parliamentary forces, the control is of a formal nature and the minority both in the parliament and in the commission is not able to exercise effective control. The inquiry committee should have independence from the parliamentary majority, so it was suggested to review the proportional formation of the committee.

Keywords: *Constitution, National Assembly,, Inquiry Committee, deputy, faction, proportion, majority.*

О ПРОБЛЕМАХ СОЗДАНИЯ И ОРГАНИЗАЦИИ ДЕЯТЕЛЬНОСТИ СЛЕДСТВЕННЫХ КОМИССИЙ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РА

АБРААМЯН ВАЗГЕН

*Аспирант Академии государственного управления РА
электронная почта: vazgen.abrahamyan@paara.am*

В статье обсуждаются вопросы формирования следственных комиссий Национального Собрания Республики Армения. Работа направлена на изучение опыта отечественных и зарубежных стран по созданию следственной комиссии и их правового статуса. Создание следственной комиссии с требованием четверти от общего числа депутатов теоретически и практически проблематично и может ограничить использование парламентским меньшинством этого инструмента надзора, поэтому было предложено пересмотреть данное положение.

Применение принципа народной легитимации в основу формирования комиссий является неверным, так как при парламентской системе правления комиссия в основном осуществляет контроль за правительством, сформированным большинством, поэтому в случае пропорционального формирования парламентской сил, контроль носит формальный характер и меньшинство как в парламенте, так и в комиссии не в состоянии осуществлять эффективный контроль. Следственная комиссия должна быть независимой от парламентского большинства, поэтому было предложено пересмотреть пропорциональное формирование комиссии.

Ключевые слова: *Конституция, Национальное Собрание, следственная комиссия, депутат, фракция, пропорциональная система, мажоритарная система.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 01.05.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 17.05.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: